# Պարույր Սևակ

## Անծանոթուհուն

Ես մտածում եմ.
Կանցնի մի շաբաթ,
Ու ես վերըստին կտեսնեմ նրան,
Ում հանդիպեցի առաջի՛ն անգամ,
Եվ մի-երկու բառ փոխանակեցինք՝
Չծանոթացած:
Կտեսնեմ նրան
Ու կասեմ «դու»-ով.
-Թույլ տուր տամ մի հարց,
Բայց շատ եմ խնդրում,
Որ դա չհաշվես բնավ հաճո խոսք:
Անցել է ահա ուղիղ մի շաբաթ,
Եվ ողջ մի շաբաթ ժպտացել ես ինձ,
Անվե՛րջ-անդադա՛ր ժպտացել:
Ինչո՞ւ:
Եվ ի պատասխան ի՛նչ էլ իմանամ,
Ի՛նչ էլ ինձ ասես՝
Ես գոհ կմնամ,
Իսկ եթե շիկնես՝
Առավե՛լ նրս:
Իսկ եթե շիկնես՝

Կշարունակեմ.
-Երկու փոսիկը,
Որ կա երեսիդ,
Ամբողջ մի շաբաթ լեցուն է եղել
Հմայքի ծովո՛վ:
Ես նո՛ր հասկացա,
Թե ոնց է լինում,
Որ հողագընդի կլոր կողերից
Ծովերը երբեք չեն թափվում ներքև,
Ու չեն դատարկվում այն փոսիկները,
Որ մենք կոչում ենք ծովերի հատակ...
Եվ ի պատասխան ի՛նչ էլ իմանամ,
Ի՞նչ էլ որ ասես՝
Ես գոհ կմնամ:
Միայն... միայն թե դու չնկատես,
Որ հանկարծ ես քեզ՝
Անծանոթուհուդ,
Դիմել եմ «դու»-ով:
Թե չնկատես՝
Ես այնժամ կասեմ.
-Դե՛, անո՛ւնդ ասա...

29-30.IV.1959թ.
Մոսկվա